ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարգահովիտ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Մարգահովիտ, /374/ 93968825, margahovit.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 16-Ա

ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով՝

Մարգահովիտ հաամայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Մարգահովիտ համայնքի ավագանու 2021թ. ապրիլի 14-ի նիստի օրակարգը:

Օրակարգ

Մարգահովիտ համայնքի ավագանու 2021թ.-ի ապրիլի 14-ի արտահերթ նիստի.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝Մարգահովիտ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել 2021 թվականի ապրիլի 14-ի թիվ 03 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Մարգահովիտ համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 14-ի թիվ 03 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին.
2. «Մարգահովիտ համայնքի արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվի նախագահ Արթուր Բեկչյանի դիմումի մասին.
3. Հայաստանի հանրապետության Լոռու մարզի Մարգահովիտ համայնքի ղեկավարի 2021 թվականի բյուջեում փոփոխությունների բյուջետային ուղերձը հաստատելու մասին
4. Լոռու մարզի Մարգահովիտ համայնքի 2021թ-ի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին
5. Գույքագրման փաստաթղթերում փոփոխություններ կատարելու մասին

6. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարգահովիտ համայնքի 2021 թվականի բյուջեի կատարման 1-ին եռամսյակի եռամսյակային հաշվետվության հաղորդումը հաստատելու մասին
7. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն տրամադրելու մասին.
8. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից վարձակալությամբ տրամադրելու մասին:
9. Արթուր Բեկչյանին սեփականության իրավունքով պատկանող 06-070-0346-0106 ծածկագրով 0.91631հա հողամասի նպատակային նշանակության փոփոխության մասին:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԺՈՐԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՍԱՐԴԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

ՍԱՖԱՐՅԱՆ ՍՎԵՏԼԱՆԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարգահովիտ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Մարգահովիտ, /374/ 93968825, margahovit.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 17-Ա

«ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՈՏՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԹՈՒՐ ԲԵԿՉՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-րդ մասի 6-րդ կետով և հաշվի առնելով «Մարգահովիտ համայնքի արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվի նախագահ Արթուր Բեկչյանի դիմումը՝ ***Մարգահովիտ համայնքի ավագանին որոշում է***

Հաշվի առնելով, որ գյուղտեխնիկաների և կցորդիչների ձեռք բերումը կնպաստի համայնքում իրականացվող գյուղատնտեսական աշխատանքների աճին, վարելահողերի մշակման խթանմանը և որ այդ գյուղտեխնիկան բացի կոոպերատիվի անդամներից կծառայի նաև համայնքի բնակիչներին, տալ հավանություն «Մարգահովիտ համայնքի արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվի նախագահ Արթուր Բեկչյանի գյուղտեխնիկա ձեռք բերելու համար համայնքի ֆինանսական միջոցներից դրամաշնորհի ձևով աջակցություն ցուցաբերելու խնդրանքին:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԺՈՐԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՍԱՐԳԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՍԱՐԳԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

ՍԱՖԱՐՅԱՆ ՍՎԵՏԼԱՆԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարգահովիտ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Մարգահովիտ, /374/ 93968825, margahovit.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 18-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի դրույթով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերի Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարգահովիտ համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարգահովիտ համայնքի ղեկավարի 2021 թվականի բյուջեում փոփոխությունների բյուջետային ուղերձը համաձայն հավելվածի:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԺՈՐԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՍԱՐԴԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

ՍԱՖԱՐՅԱՆ ՍԱՎԵՏԼԱՆԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՈՒՂԵՐՁ

Հաստատվել է Հայաստանի հանրապետության Լոռու մարզի Մարգահովիտ համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 14-ի թիվ 18 որոշմամբ

ՄԱՍ I

ՀՀ Լոռու մարզի Մարգահովիտ համայնքի ղեկավարի զեկույցը 2021 թվականի Մարգահովիտ համայնքի զարգացման ուղղություններից մեկի՝ գյուղատնտեսության վերաբերյալ:

Հիմք ընդունելով համայնքում գյուղատնտեսության զարգացման 2018-2022 թվականների հնգամյա զարգացման ծրագրով նախատեսված գերակայություններն ու առկա ռեսուրսները, Մարգահովիտ համայնքի 2021 թվականի առաջնահերթությունները

ՄԱՍ II

Բացատրագիր - հիմնավորում Մարգահովիտ համայնքի 2021 թվականի բյուջեի փոփոխությունների նախագծի

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի «Մարգահովիտ համայնքի արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվի նախագահ Արթուր Բեկչյանի դիմումն այն մասին, որ 2015թ. օգոստոսի 7-ին կնքվել է եռակողմ համագործակցության մասին համաձայնագիր՝ ՀՀ Գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի, «Մարգահովիտ համայնքի արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվի և ՀՀ Լոռու մարզի Մարգահովիտ համայնքի միջև, ըստ որի համայնքը պետք է մասնակցի կոոպերատիվի ներդրումային ծրագրին: Նախատեսվող ձեռքբերվելիք գյուղտեխնիկաների և կցորդիչների (շուրջ 11 անուն) 80% վճարելու է «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը, 20% տոկոսը /28մլն դրամ/՝ կոոպերատիվը: Կոոպերատիվն ունի 80 անդամ, սակայն նրանց ֆինանսական միջոցները չեն բավարարում գյուղտեխնիկաների և կցորդիչների ձեռք բերման համար: Հաշվի առնելով, որ այս տարի ծրագրի վերջնաժամկետն է և որ այն կնպաստի համայնքում իրականացվող գյուղատնտեսական աշխատանքների աճին, համայնքի արոտավայրերի կառավարման և անասնապահության զարգացմանը, վարելահողերի մշակման խթանմանը և բացի կոոպերատիվի անդամներից կծառայի նաև համայնքի բնակիչներին, առաջարկում եմ համայնքի բյուջեից կոոպերատիվին տրամադրել 10մլն դրամ գումար՝ վարչական բյուջեի պահուստային ֆոնդից, որը ըստ բյուջեի եռամսյակային բաշխվածության նախատեսված էր օգտագործել 2021 թվականի չորրորդ եռամսյակում: Որպեսզի պահուստային ֆոնդից երկրորդ եռամսյակի դրությամբ կարողանանք համապատասխան գումարի չափով հատկացում կատարել Գյուղատնտեսություն բաժնին պետք է բյուջետային որոշ ծախսերի երկրորդ եռամսյակի պլաններից նվազեցումներ կատարել: Առաջարկում եմ այդ նվազեցումները կատարել հետևյալ ծախսերից.

- **Կառավարման ապարատ բաժնի** - Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներից երկրորդ եռամսյակի պլանից նվազեցնել 1500,0 հազար դրամ և երրորդ եռամսյակի պլանից՝ 2000,0 հազար դրամ,
- **Ճանապարհային տրանսպորտ բաժնի** տրանսպորտային նյութերի երկրորդ և երրորդ եռամսյակների պլաններից նվազեցնել 400,0 հազար դրամ
- **Աղբահանում բաժնի** կոմունալ ծառայությունների երկրորդ եռամսյակի պլանից նվազեցնել 2000,0 հազար դրամ, երրորդ եռամսյակի պլանից՝ 3000,0 հազար դրամ,
- **Ջրամատակարարում բաժնի** ընթացիկ նորոգումի երկրորդ և երրորդ եռամսյակի պլաններից նվազեցնել 400,0 հազար դրամ
- **Բերքի տոն, մարաթոն , նվերներ** բաժնի ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների երկրորդ և երրորդ եռամսյակի պլաններից նվազեցնել 300,0 հազար դրամ
- **Անապահով ընտանիքների օգնություն** բաժնի այլ նպաստներ բյուջեից երկրորդ եռամսյակի պլանից նվազեցնել 500,0 հազար դրամ

Գումարը բավականացնելու համար առաջարկում եմ նաև **Գույքահարկ փոխադրամիջոցների համար** եկամտատեսակի երկրորդ և երրորդ եռամսյակների պլանը ավելացնել 1000,0 հազար դրամով: Արդյունքում պահուստային ֆոնդի եռամսակային բաշխվածությունը կստանանք հետևյալ կերպ.

I եռ.	II եռ.	III եռ.	IV եռ.
2.872,3	7550,9	13.013,8	15.300,7

Ստանալով նման բաշխվածություն կարող ենք երկրորդ եռամսյակի դրությամբ համապատասխան բաժնով հատկացում կատարել **Գյուղատնտեսություն բաժնի** կապիտալ դրամաշնորհին, որտեղ մինչ այժմ ունենք նախատեսած 4000,0 հազար դրամ:

Գյուղատնտեսություն բաժնի կապիտալ դրամաշնորհի համար կստանանք հետևյալ եռամսյակային բաշխվածությունը.

I եռ.	II եռ.	III եռ.	IV եռ.
4.872,3	10550,	17.013,8	17.013,8

Վերը նշված փոփոխությունից բացի առաջարկում եմ նաև 1500,0 հազար դրամի չափով գումար ավելացնել **Հուշարձանների պահպանություն և վերանորոգում բաժնին,** քանի որ մինչ այդ նախատեսած 1000,0 հազար դրամ գումարը չի բավականացնում համայնքի կենտրոնում գտնվող հուշարձանի կապիտալ վերանորոգմանը: Համապատասխան գումարի չափով նվազեցում կարող ենք կատարել **Կառավարման ապարատի** բաժնի տրանսպորտային սարքավորումների նախատեսված պլանից:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Մարգահովիտ համայնքի ղեկավար՝ Ս. Անանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարգահովիտ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Մարգահովիտ, /374/ 93968825, margahovit.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 19-Ն

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2021Թ-Ի ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով՝ ***Մարգահովիտ համայնքի ավագանին որոշում է.***

Մարգահովիտ համայնքի 2021թ-ի բյուջեում կատարել փոփոխություններ՝ համաձայն 1-5 հավելվածների:

1. Եկամուտների գծով

Ընդամենը համայնքի բյուջեի մուտքեր - 189494,5 /մեկ հարյուր ութսունինը միլիոն չորս հարյուր իննսունչորս հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ

ա) Ընդամենը վարչական բյուջեի մուտքեր - 131390,7 /մեկ հարյուր երեսունմեկ միլիոն երեք հարյուր իննսուն հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ

այդ թվում՝

- վարչական բյուջեի եկամուտներ - 131390,7 /մեկ հարյուր երեսունմեկ միլիոն երեք հարյուր իննսուն հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ

բ) Ընդամենը ֆոնդային բյուջեի մուտքեր - 58103,8 /հիսունութ միլիոն մեկ հարյուր երեք հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ

այդ թվում՝

- ֆոնդային բյուջեի եկամուտներ - 0,0 /զրո/ ՀՀ դրամ

- տարեսկզբի ազատ մնացորդ - 58103,8 /հիսունութ միլիոն մեկ հարյուր երեք հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ

2. Ծախսերի գծով

Ընդամենը համայնքի բյուջեի ծախսեր - 189494,5 /մեկ հարյուր ութսունինը միլիոն չորս հարյուր իննսունչորս հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ

ա) Ընդամենը վարչական բյուջեի ծախսեր - 131390,7 /մեկ հարյուր երեսունմեկ միլիոն երեք հարյուր իննսուն հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ

բ) Ընդամենը ֆոնդային բյուջեի ծախսեր - 58103,8 /հիսունութ միլիոն մեկ հարյուր երեք հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ:

3. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հատված 1-ի:

4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման՝ համաձայն հատված 2-ի:

5. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 3-ի:

6. Հաստատել համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելորդը կամ դիֆիցիտը (պակասուրդը)՝ համաձայն հատված 4-ի:

7. Հաստատել համայնքի բյուջեի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ համաձայն հատված 5-ի:

8. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 6-ի:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԺՈՐԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՍԱՐԴԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

ՍԱՖԱՐՅԱՆ ՍՎԵՏԼԱՆԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարգահովիտ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Մարգահովիտ, /374/ 93968825, margahovit.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 20-Ա

ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՏԻՄ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետով.

Մարգահովիտ համայնքի ավագանին որոշում է.

Մարգահովիտ համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարել փոփոխություններ և ավելացնել հետևյալ գույքը.

1. Տպիչ HP MFP M28a - 1 հատ - 92.900 (ինսուներկու հազար ինը հարյուր) դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԺՈՐԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՍԱՐԴԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

ՍԱՖԱՐՅԱՆ ՍՎԵՏԼԱՆԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարգահովիտ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Մարգահովիտ, /374/ 93968825, margahovit.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 21-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի՝ Մարգահովիտ համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Ի գիտություն ընդունել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարգահովիտ համայնքի ղեկավարի կողմից ներկայացված Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարգահովիտ համայնքի 2021 թվականի բյուջեի կատարման ընթացքի մասին առաջին եռամսյակի եռամսյակային հաշվետվության հաղորդումը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԺՈՐԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՍԱՐԴԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

ՍԱՖԱՐՅԱՆ ՍՎԵՏԼԱՆԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարգահովիտ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Մարգահովիտ, /374/ 93968825, margahovit.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 22-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆՀԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝ ***Մարգահովիտ համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է՝***

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի,
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին.
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԺՈՐԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՍԱՐԴԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

ՍԱՖԱՐՅԱՆ ՍՎԵՏԼԱՆԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ

Հավելված

ՀՀ Լոռու մարզի Մարգահովիտ համայնքի ավագանու

2021 թվականի ապրիլի 14-ի N 22-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Եսայան Կարինե Լենիկի - երեսուն հազար դրամ /սոց. օգնություն/,
2. Մատինյան Նվարդ Արամի - տասնհինգ հազար դրամ /սոց. օգնություն/,
3. Զոհրանյան Աղվան Ավագի - երեսուն հազար դրամ /սոց. օգնություն/,
4. Գասպարյան Էմմա Զարմայրի - քսան հազար դրամ պ/սոց. օգնություն/,
5. Բեժանյան Անուշ Ռուբենի - քառասուն հազար դրամ /սոց. օգնություն/,
6. Սարուխանյան Նադյա Սուրենի - հիսուն հազար դրամ /հուղարկ. նպաստ/,
7. Մինասյան Հերմինե Անդրանիկի - քառասուն հազար դրամ /սոց. օգնություն/,
8. Միրզախանյան Լյուբա Գալուստի - քսան հազար դրամ /սոց. օգնություն/,
9. Դալլաքյան Գոհար - քսան հազար դրամ /սոց. օգնություն/,
10. Սահակյան Գարիկ Գարեգինի - երեսուն հազար դրամ /սոց. օգնություն/,
11. Պողոսյան Գառնիկ Վազգենի - քսան հազար դրամ /սոց. օգնություն/,
12. Հարությունյան Նարինե Խեչոյի - քսան հազար դրամ պ/սոց. օգնություն/,
13. Սարուխանյան Արեգնազան Հ. - քսանհինգ հազար դրամ /սոց. օգնություն/,
14. Ալչանգյան Ահարոն Սամվելի – քառասուն հազար դրամ /սոց. օգնություն/,
15. Խառատյան Հայկ Վանիկի – երեսուն հազար դրամ /սոց. օգնություն/:

Ընդամենը – 430.000 /երեք հարյուր վաթսուն հազար/ դրամ:

ՄԱՐԳԱՀՈՎԻՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ _____ ԱՎԱԳ ԽԱՌԱՏՅԱՆ

(ստորագրություն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարգահովիտ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Մարգահովիտ, /374/ 93968825, margahovit.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 23-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ՏԻՄ օրենքի 18-րդ 1-ին մասի հոդվածի 21-րդ կետի, հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի, ***Մարգահովիտ համայնքի ավագանին որոշում է.***

Վարձակալությամբ տրամադրել.

1. 06-070-0239-0002 ծածկագրի III կարգի արոտավայրը - 0,025 հա - 1000 դրամ տարեկան (նախնական) վարձավճարով,
2. 06-070-0329-0007 ծածկագրի II կարգի խոտհարքը - 0,4670 հա - 4000 դրամ տարեկան (նախնական) վարձավճարով,
3. 06-070-0329-0009 ծածկագրի II կարգի խոտհարքը - 0,8493 հա - 6500 դրամ տարեկան (նախնական) վարձավճարով
4. 06-070-0302-0013 ծածկագրի այլ հողատեսքը - 0,2745 հա - 3000 դրամ տարեկան (նախնական) վարձավճարով:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԺՈՐԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՍԱՐԴԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

ՍԱՖԱՐՅԱՆ ՍՎԵՏԼԱՆԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարգահովիտ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Մարգահովիտ, /374/ 93968825, margahovit.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 24-Ա

ԱՐԹՈՒՐ ԲԵԿՉՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 06-070-0346-0106 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.91631ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով՝ Արթուր Բեկչյանի դիմումը, անշարժ գույքի գրանցման թիվ 04042017-06-0024 վկայականը, ԱՁ Գասպար Վեքիլյանի կողմից կազմված հողամասի և շինությունների հատակագծերը, 27.11.2019թ թիվ 08 ճարտարա-պետահատակագծային առաջադրանքը, նախագիծը, 27.12.2019թ թիվ 08 շինարարության թույլտվությունը. 25.11.2020թ փաստագրման ակտը, ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 18 հոդվածով, ՀՀ Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածով, Մարգահովիտ համայնքի ավագանին

որոշում է

1. ՀՀ Լոռու մարզի Մարգահովիտ համայնքի 4-րդ փողոց 2-րդ փակուղի թիվ 1 հասցեում գտնվող Արթուր Նարիմանի Բեկչյանին սեփականության իրավունքով պատկանող 06-070-0346-0106 ծածկագրով 0,91631հա գյուղատնտեսական նպատակային նշանակության՝ խոտհարքի նպատակային նշանակությունը փոփոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի նշանակության՝ շինարարության թույլտվությունով կառուցված անասնագոմի նշանակությանը համապատասխան.
2. Հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը չի առաջացնում հողամասի կադաստրային արժեքի տարբերության վճարման պարտավորություն.
3. Հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները պետական գրանցում ստանալուց հետո այն արտացոլել հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշիռներում.

4. Համայնքի ավագանու որոշումը ներկայացնել համայնքի ղեկավարի հաստատմանը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԺՈՐԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՍԱՐԴԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

ՍԱՖԱՐՅԱՆ ՍՎԵՏԼԱՆԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ